ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

_____N _____
Ձեր N _____

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անանյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 116-րդ կետը՝ ցանկանում եմ տեղեկացնել, որ Գնումների բողոքարկման խորհրդի 25.12.2015 թվականի /հրապարակված 30.12.2015 թվականին/ թիվ 47/15 որոշման հիման վրա ՀՀ առողջապահության նախարարության «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016 թվականի հունվարի 13-ի նիստում (արձանագրությունը կցվում է) որոշում է կայացվել դադարեցնել «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.12.2015 թվականի թիվ 6-րդ արձանագրությամբ նիստի կասեցման ժամկետը երկարացնելու մասին որոշումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Լուիզա Սարգսյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի
ֆինանսատնտեսագիտական բաժին,
հեռ. 56-41-21

Արձանագրություն Ն 7
ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար շրջանակային համաձայնագրով քիմիական նյութերի «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «13» «հունվարի» 2016թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Վ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ	Վ. Գրիգորյան, Ա. Պետրոսյան
Հանձնաժողովի քարտուղար	Լ. Սարգսյան

1. «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի 04.12.2015թ.-ի թիվ 6 արձանագրության մասին

(Վ. Հակոբյան)

Հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ 47/15 որոշումը՝ գնահատող հանձնաժողովն որոշեց դադարեցնել «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի 04.12.2015թ.-ի թիվ 6 արձանագրությամբ նիստի կասեցման ժամկետն երկարացնելու մասին որոշումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. 11-րդ չափաբաժնի գնահատման մասին

(Վ. Հակոբյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի Ն 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը՝ որոշվեց մերժել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի գնման հայտը, քանի որ վերջինիս կողմից ներակայացված նախկինում կատարված պայմանագրերը չեն բավարարում «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ որոշվեց 11-րդ չափաբաժնի անվանման ու տեխնիկական բնութագրի ներկայացման պահանջ ներկայացնել 11-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին,

առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրերի ընթացքում ներակայացնել վերոհիշյալ փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Վ. Հակոբյան)

«ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 49-րդ կետի «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Վ. Հակոբյան

Անդամներ՝ ---------- Վ. Գրիգորյան

---------- Ա. Պետրոսյան

Քարտուղար՝ ---------- Լ. Սարգսյան